քո տեառնն միջնորդութեամբ...»[124], *եւ՝ «այս իմ գիր է Հասանա, որ երբ իմ* աղ-*բէրս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ ե-րետ, ես զխնձորաբակս իւր սահմանովն ի յեկեղեցիս տուի...»*[125]*):*

Տեղին նկատենք, որ առկայ աղբիւր-ներում վկայուած են Հասանի եւ Դօփի միայն երկու որդիներ՝ Գրիգոր Բ Ծարեցի իշխանը (Ստեփաննոս Օրբէլեանի մօտ կո-չուած՝ «Մեծ») եւ Հաղբատի եպիսկոպոս Յովհաննէսը: Վերջինիս՝ Հաղբատավանքի գաւթում, շուրջ չորս տասնեակ տապանա-քարերի շարքում[126] *պահպանուած գերեզ-մանաքարի (5 տողանոց տապանագիրը՝ «Զաքարէի եւ Ի/անէի քվերորդի/ն՝ Յով-հանն[է]ս / եպիսկոպոս տեղ/ոյս»)* աջ *կողքին գտնւում է նաեւ նրա մօր շիրիմը՝ «Զաքարէի եւ Իւանէի / քոյրն է՝ Դաւփն» երկտող տապանագրով*[127]*: Ի դէպ, գաւթի խիտ թաղումների շարքում նշուած տապա-նաքարերի դիրքը՝ կողք կողքի եւ ճախից աջ, թույլ է տալիս ենթադրել, թէ, ամենայն հաւանականութեամբ, Դօփ իշխանուհին Ծարից Հաղբատ է մեկնել՝ ըստ ամենայնի, վաղամեռիկ եպիսկոպոս-զաւակի յուղար-կաւորութեանը մասնակցելու առիթով, ընդ որում, տեղ հասնելուց ոչ շատ ժամանակ անց ինքն էլ է վախճանուել, եւ դա թոյլ է տուել՝ նրան թաղելու որդու շիրիմի անմի-ջապէս աջ կողքին: Բ. Ուլուբաբեանը պն-դում է, թէ Դօփի ու Հասանի որդիներն են եղել նաեւ Գրիգորն ու Գերգը (Գիորգ), ո-րոնցից երկրորդի՝ Դաղիվանքի փոքր գմբե-թաւոր եկեղեցու արեւմտեան պատի մէջ ա-գուցուած եւ 1181 թուակիր ոչ մեծ խաչքա-րի 5 տողանոց տապանագրում առաջին եղ-բայրն իրեն անուանել է «քուերորդի» («Թ՝ուին :ՈԼ:* [=1181 թ.]. *ես՝ Գրիգոր* քուերորդի, *կանգնեցի զխաչս եղբաւր իմոն Գիորգա. որք երկրպագէք, յաղաւթս յիշեսջի՛ք»)*[128]*: Սակայն իրականում ժամանակային տե-սանկիւնից այդ արձանագրութիւնը վե-րագրելի է, ենթադրաբար, Հասան Մեծ Կրօ-նաւորեալի (այսինքն՝ տարածքի ոչ պակաս հզօր ու նշանաւոր իշխանաց իշխանի*[129]*)՝ թէկուզ եւ այլուր չյիշատակուած մի քրոջ զաւակներին, եւ ոչ թէ Զաքարէ ու Իւանէ Երկայնաբազուկների «քուերորդի»-ներին, որոնց մեծ մասն այդ տարում առաւել մեծ հաւանականութեամբ դեռեւս ծնուած էլ չէր: Ի դէպ, ամենեւին հասկանալի չէ ու-սումնասիրողի ձգտումը՝ Հաղբատի եպիս-կոպոս, Դօփի որդի Յովհաննէսին ներկա-յացնելու էէնց իբրեւ ԺԲ. դ. վերջում ապ-րած անձնաւորութեան: Դեռեւս Կ. Տէր-Մկրտչեանի դիտարկմամբ՝ արդէն Կիրակոս Գանձակեցու մօտ մանրամասն տարբերա-կուած են ԺԲ.-ԺԳ. դարերում Հաղբատի ե-պիսկոպոս եղած երեք Յովհաննէսները (իսկ ԺԳ. դարավերջին եղել է նաեւ չորրորդը), որոնցից երկրորդին է պատմիչը ներկայաց-նում իբրեւ «քուերորդի իշխանացն Զաքա-րէի եւ Իւանէի եւ եղբօրորդի առաջնոյ Յովհաննէսի»*[130]*: Իսկ բերուած արտայայ-տութիւնից առաջ պատմիչը նշում է. «...սուրբն Գրիգորիս... Եւ յետ նորա՝* Յով-հաննէս, *այր հեզ եւ առաքինի,* ազգական *իշխանացն* Խաչենոյ*: Սա քակեաց զգաւիթն*

124 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 121 (N 401):

125 Նոյն տեղում, էջ 122 (N 402):

126 Արձանագիր քարերի թիւը 37 է:

127 **Կ. Ղաֆադարեան**, *Հաղբատ*, էջ 184-185, N 54, ժդ, ժե:

128 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 211 (N 742). **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 115 (N 43):

129 Այդ առումով հմմտ., օր.՝ Դարբասներ տեղա-վայրում մեծ խաչքարի վրայ Գարեգին Յովսէ-փեանի ընթերցած վնասուած բնագիրը. «Ի թվիս :ՈԻԲ: *[=1173 թ.].* ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի եւ ի *թագաւորութեանն* [... - *թերեւս՝* Հասանայ - *Ա. Յ.*] ես՝ Սրահանգս, որդի Զաջոա, կանգնեցի զխաչս» (*Դիւան հայ վիմա-գրութեան*, պր. V, էջ 74, N 217):

130 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, գլ. Ա, էջ 99: Հմմտ. **Կարապետ եպիսկոպոս**, *Դօ-փեանք եւ Մելիք-Շահնազարեանք*, էջ 56-59: